թեան, կատարուած անլուր ողբերգութեան հանդէպ, բայց ունինք նաև գլխաբան բընոյթ կրող երևոյթներ, որ կ'տեսնենք հետևեալ գլուխների մէջ։

Մարիամի և Յովհաննու պատկերներն էլ ընթացակից են խաչելութեան կամ խաչից իջեցնելու պատկերագրութեան, ինչպէս մեր մանրանկարների մէջ էլ տեսանք, ամենահին մնացորդներից սկսած, բացառութեամբ Սաբինայի դրան։ Բրիտանական թանգարանի փղոսկրէ տախտակի խաչելութեան և Րաբուլայի մանրանկարի մէջ Մարիամ և Յովհաննէս կանգնած են խաչեցեալի աջ կողմից, իսկ այնուհետև սովորական է Մարիամ աջից և Յովհաննէս ձախից, իրենց արտայայտութեան ձևերի փոփոխութեամբ, ընթացակից խաչելութեան պատկերագրութեան պատմութեան։ Բրիտանական թանգարանի խաչելութեան մէջ անհաղորդ են նրանք կատարուած ողբերգութեան, լուրջ, առանց սգոյ նշանների, ինչպէս խաչեցեալն էլ առանց ցաւի արտայայտութեան, Մարիամ կօշիկներով և Յովհաննէս ոտաբոբիկ(1)։ Մոնցայի իւղաշշերի պատկերագրութեան մէջ ես չկան ողբի նշաններ. Մարիամ կանգնած է աջից բարեխօսի դիրքով, իսկ Յովհաննէս միւս կողմից, ձախով աւետարան բռնած և աջը վեր բարձրացրած իբրև աւետարանիչ և վկայ կատարուած իրողութեան։ Բրանդի բուրվառների (պատկ. 19, 20), Լիխաչովի կնիքի(2) դէմքերի նկատմամբ դժուար է ճիշդ բան ասել, բայց դիրքերից երևում է, որ նախընթաց խմբին են պատկանում։ Խլուդովի սաղմոսարանի խաչելութեան պատկերներից մէկում Մարիամ և Յովհաննէս կանգնած են ձախից, Մարիամը աջը ծնոտին և թաչկինակը ձախ ձեռքին, իսկ Յովհաննէս մի ձեռքը այտին զարմացքի արտայայտութեամբ(3)։ Ժ. դարից արդէն ընդհանրացած է աջից Մարիամին տեսնել և ձախից Յովհաննէսին, մէկը թեթև ողբով հաղորդակից որդու չարչարանքին, միւսն իբրև աւետարանիչ և վկայ. այսպէս է Դափնիի որմանկար խաչելութեան մէջ, որ Ժ. դարի գործ է(1)։ Էլմալիքլիսայի Ժ–ԺԱ. դարի(2), Փարիզի մետալիոնների կաբինետի փղոսկրի եռափեղկ պահարանի խաչելութեան(3), ըստ Diehl*ի Ժ–ԺԱ. դարի, կան և աւելի ուշ կարծողներ։ Իսկ աւելի յետոյ Մարիամի և մասամբ Յովհաննէսի ողբի արտայայտութիւնը խիստ կերպարանք է ստանում, ինչպէս Լենինգրադի Ալէքսանդր Գ.ի թանգարանի խաչելութեան մէջ, ըստ Կոնդակովի ԺԱ.–ԺԲ. դարի գործ, բայց Ժ. դարի դրոշմով(4). Դրանի մասանց պահարանի խաչից իջեցնելու տեսարանը խիստ ողբացող Մարիամով և Յովհաննէսով, ինչպէս և Փարիզի Ազգային Մատենադարանի* N 54 *ձեռագրի խաչից իջեցնելու մանրանկարի մէջ(5)։ Այդ յատկութիւնները մեզանում երևան են գալիս ԺԳ. դարում, աւելի Կիլիկեան շրջանի մանրանկարչութեան մէջ, ինչպէս Կոստանդին կաթուղիկոսի եղբօր որդու համար Թորոս Ռոսլինի նկարած աւետարանը, կամ Սմբատ Գունդստաբլի՝ Աւետիք նկարչի կողմից, և Երուսաղէմում պահուած Վասակ արքայեղբօր և Կեռան թագուհու աւետարանների մէջ (պատկ.* 32, 33, 34, 35)(6)։

Յիսուսի կողը խոցող և քացախ մատուցանող ֆիգուրները չենք նկատում առաջին շրջանի պատկերների մէջ, բացի Րաբուլայի մանրանկարներից, որ ինչպէս տեսանք, համարւում է փոփոխութեան ենթարկուած յետագայ դարերում, բայց արդէն յիշատակուած Կոստանդին Հաղոսացու և Յովհան Դամասկացու կողմից (Ը. դարի առաջին կէսը), իսկ պատկերագրութեան մէջ երևան են գալիս Պերմի սկուտղի և Մոնցայի իւղաշշերի, ինչպէս և Հռոմի Մարիա Անտիկուայի խաչելութեան հետ, աւելի ուշ՝ Թ. դարում Խլուդովի Սաղմոսա-

(1) Kraus. I. 174։

(2) Istoritscheskoe Skatschenie Italo-Gretscheskoj Ikonopisi Isobrajenis Bogomateri. 1911. SP. 141։

(3) Kondakow. Miniatyri Gretscheskoj rukopissi psaltiria IX weka. Moskwa. 1878։

(1) Diehl. L'art Byz. 465. 499։

(2) *Անդ.* 540։

(3) *Անդ.* 621։ *Բայէ. ռուս. թարգմ.* Bisant. Iskusstwa 1883. SP. 189|90։

(4) Ikonographia Iesusa Xrista. Tabl. XII. *բնագիրը* 81։ *Մենք հակուած ենք* Diehl*ի հետ* (554) *աւելի ուշ ժամանակի գործ համարելու։*

(5) Diehl 649։ Pokrowski. Xrist. Iskusst. 147|8։

(6) *Առաջինն այժմ չգիտեմ, ո՞րտեղ է. Սմբատ Գունդստաբլի աւետարանն այժմ գտնւում է Երևանում* N 211, *որ բերուած է Նոր Նախիջևանի Ս. Աստուածածին եկեղեցուց. Երուսաղէմի ձեռագրերի* NN 2568|13, 88*ա և* 2563|8, 362*բ*։